

ԿԵՆՊԿՆԻՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԲԱՏԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Ա. Յ. ՖԵԼԵՑՅԱՆ

Լեզվի բառապաշարը, ինչպես հայտնի է, կարելի է բաժանել տարբեր իմաստային խմբերի: Դա կարող է արվել՝ հաշվի առնելով բառերի թե՛ բուն լեզվական յուրահատկությունները, ինչպես բառերի դասակարգումն է ըստ խոսքի մասերի, թե՛ լեզվական-ոճական առանձնահատկությունները (այստեղ ունենում ենք ոճականորեն չեզոք և ոչ չեզոք շերտեր) և թե՛ արտալեզվական բնութագրումները: Այս վերջին դեպքում առանձնանում են բառապաշարի թեմատիկ դասերը, այսինքն՝ բառերի այնպիսի խմբեր, որոնք միավորվում են ընդհանուր թեմայով, անվանվող հասկացությունների մասնությամբ (ինչպես՝ ազգակցական կապ ցույց տվող բառեր, կահույքի առարկաներ ցույց տվող բառեր, արդուզարդի առարկաների, մասնագիտությունների անվանումներ, գունանուններ, բուսանուններ և այլն):

Բառապաշարի ուսումնասիրման համար շատ մեծ է լեզվաբանական կամ բանասիրական բառարանների դերը: Բառապաշարի բառաիմաստային համակարգը այս կամ այն չափով ու ճշգրտությամբ ներկայացվում է բացատրական բառարաններում: Մրանցում բացատրվում են նախ և առաջ բառերի իմաստները (իմաստային կառուցվածքը) և կապերը այլ բառերի հետ: Այս բառարաններում են բառերը գտնում իրենց լիակատար նկարագրությունը (ինչյունական, ուղղագրական-ուղղախոսական, ձևաբանական, բառակազմական, շարահյուսական, նաև ոճական):

Բառարանագրության համար կարևոր է բառապաշարի թեմատիկ խմբերի միօրինակ բացատրությունների սկզբունքների մշակումը: Մրանով ավելի գիտական հիմքերի վրա կդրվի բառերի մեկնությունը, առավել ճշգրտությամբ կբացահայտվեն բառապաշարի թեմատիկ այլևայլ խմբերի մեջ մտնող միավորների միջև եղած իմաստային, բառակազմական և այլ կապերը, ավելի հստակ կերևա բառապաշարի համակարգայնությունը¹: Մենք կփորձենք ներկայացնել այդպիսի խմբերից մեկի՝ կենդանիների անվանումների բացատրությունը հայերենի ընդհանուր բառարաններում: Կենդանիների անուններ նշանակող բառերի մի ստվար մասը մտնում է մեր լեզվի հիմնական բառազանձի մեջ, իր ծագումով հասնում է մինչև հնդեվրոպական նախալեզու, ավանդված է լեզվի հնագույն շրջաններից:

Որպես ուսումնասիրության նյութ ընտրված են հայերենի ոչ բոլոր կենդանանունները: Մենք անդրադարձել ենք հիմնականում կաթնասունների անվանումներին, իսկ կենդանիների մյուս խմբերից (թռչուններ, սողուններ, ձկներ և այլն) բառերը վերցրել ենք ընտրողաբար (միայն նրանք, որոնք մտնում են հիմնական բառաֆոնդի մեջ կամ իրենց կազմում ունեն հայերեն որևէ ձևայն՝ արմատ, ածանց կամ ածանցակերպ):

¹ Հմնտ. **Д. Н. Шмелёв**, Современный русский язык. Лексика, М., 1977, էջ 185-187, **М. И. Фомина**, Современный русский язык. Лексикология, М., 1990, էջ 12:

² Հմնտ. **М. И. Фомина**, նշվ. աշխ., էջ 17, **Н. Ю. Шведова**, Однотомный толковый словарь (специфика жанра и некоторые перспективы дальнейшей работы) // Русский язык: проблемы художественной речи, лексикология и лексикография, М., 1981, էջ 171:

Ժամանակագրական կարգով քննության ենք առել հայերենի բացատրական ընդհանուր ամենահայտնի ծավալուն բառարանները՝ Նոր հայկազյան բառարանը, Առձեռն հայկազյան բառարանը, Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը», «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը» և էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը»: Սրանք ոչ միայն իրենց ժամանակի առավել լիակատար և գիտական սկզբունքներով կազմված բառարաններն են, այլև խոշոր երևույթներ էին հայ բառարանագրության և ընդհանրապես մշակույթի պատմության մեջ: Իսկ վերջին երկուսը այսօր էլ մնում են արդիական: Պետք է նշել, որ վերոհիշյալ բառախմբի մեկնությունն ընդհանուր առմամբ առ այսօր հստակեցված չէ, թեև բառարաններում նկատվում են դրանց բացատրության ինչ-ինչ օրինաչափություններ և միտումներ:

Հայոց լեզվի՝ գիտական սկզբունքներով կազմված առաջին բառարանն է «Նոր բառգիրք հայկազեան լեզուի»՝ աշխատությունը: Այն հեղինակել են Մխիթարյան միաբաններ Գ. Ավետիքյանը, Խ. Սյուրմեյանը և Մ. Ավգերյանը: 1. ույս է տեսել երկու հատորով Վենետիկում 1836-37 թթ., ապա նույնությամբ վերահրատարակվել է 1979-81 թթ. Երևանում (մեր ձեռքի տակ է եղել այս վերահրատարակությունը): ՆՀԲ-ն ընդգրկում է գրաբարի փաստորեն ամբողջ բառապաշարը, այն բնույթով բառարան-գանձարան է: Այս բառարանն աչքի է ընկնում քառերի իմաստաբանական և լեզվաբանական մշակմամբ և բացատրությունների մատչելիությամբ (բացատրությունները գրաբարով են): Հեղինակներն ամենայն քարեխղճությամբ հավաքել են գրաբարի՝ իրենց հասանելի ողջ բառապաշարը, բնագրային վկայություններով ճշտել են քառերի իմաստներն ու իմաստային նրբերանգները, քերականական ձևերը, ուղղագրությունը: Այն գրաբարի նորմատիվ բառարան է:

Մեզ հետաքրքրող բառախմբի բառերը այս բառարանում ներկայացված են հետևյալ կերպ (սա նաև ՆՀԲ-ի բառահողվածների կազմության ընդհանուր սկզբունքն է): Նախ գլխագրերով բերված են գլխաբառը և տվյալ բառի գրչական տարբերակները (եթե կան), ապա կատարված են քերականական նշումները (գոյականների համար տրված է եզակի սեռականի կազմությունը, անհրաժեշտության դեպքում՝ նաև հոգնակին և մյուս հոլովները): Սրանց անմիջապես հետևում են հունարեն և լատիներեն համարժեքները (հունատառ և լատինատառ): Ապա բառը հաճախ ստուգաբանված է կամ նշված է փոխառության աղբյուրը: Այս ամենին հետևում է բառի իմաստի կամ իմաստների բուն բացատրությունը, բերվում է բառի ծանկոտն հոմանիշը, պալ.տաղիթ թուրքերեն թարգմանությունը, իսկ շատ հաճախ պարսկերեն, արաբերեն, եբրայերեն, նաև եվրոպական լեզուներով՝ ֆրանսերեն, իտալերեն, երբեմն ռուսերեն և այլ լեզուներով թարգմանությունները (սրանք բոլորը՝ հայատառ): Վերջում ժամանակագրական կարգով պատմական հաջորդականությամբ, բերված են մատենագրական վկայություններ:

Նոր հայկազյանի լույսընծայման ժամանակ դեռևս չէին մշակված հայերենի բառարանագրության շատ հարցեր: Ավելին, այս բառարանի հեղինակներն իրենք են հայերենի բառարանագրության բազմաթիվ տեսական հարցերի առաջին մշակողներն ու դրանց գործնական կիրառողները: Եվ բնականաբար, բառարանի բացատրական մասը գերծ չէ որոշ թերություններից:

Կենդանանունների բացատրության մեջ չկա մեկ ընդհանուր սկզբունք, սակայն նկատելի են որոշակի օրինաչափություններ: Բացի հունարեն, լատիներեն,

¹ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Խա. առաջին, Վենետիկ, 1836, Խա. երկրորդ, Վենետիկ, 1837: Այսուհետև տեքստում ՆՀԲ կամ Նոր հայկազյան բառարան:

թուրքերեն (ոչ սակավ նաև այլ լեզուներով) պարտադիր թարգմանություններից՝ հեղինակները շատ հաճախ նշում են նաև տվյալ բառով անվանվող կենդանու գույնը, չափը, ծայրը, մաշկի ծածկույթը, բնակվելու վայրերը, սնունդի առարկաներն ու սնվելու ձևը և այլն, այսինքն՝ փորձում են հնարավորինս լրիվ և բազմակողմանի նկարագրել կենդանուն: Բերենք մեկ-երկու բնորոշ բառահոդված: ԱՅԾ, *ի, ից*. գ. Տես և զկնի ԱՅԾԻՔ. Նոյն բառ և 'ի յն. *աիքս* կամ *էքս*. 'Ալջ. սեռ. *այոժ*. Capra և Caper. Ազգ խաշին՝ նման ոչխարի, այլ անհանդարտ, յանդուգն, և ճարտար, մորուսնի, և երկայն գիտուք կամ մազուք մարմնոյ ողջոյն. արականն կոչի Քաղ. իսկ Այծ՝ է առաւել էգն քան արուն. *այծ, էծ, իծուկ. քէյի, պիւզ, էնգ*. [բնագրային վկայություններ]:

ԱՐՁ, *ոյ, ոց*, կամ *ու, ուց*, և *ից*. գ. յորմէ յն. *արգոս*. ուստի լտ. *նիրսու*. Ἀρχος. Ursus, ursa. Գազան յաղթամարմին, գորատր և ճարտար թափիք. կատաղի, և երկչոտ, հասարակօրէն թխագոյն. *այը, այու, տիւպպ, խըրս*. [բնագրային վկայություններ]: ԱՐՁ. Ըստ աստեղաբաշխից՝ Սայը երկնից. մեծ արջ, և փոքր արջ. եօթն եօթն երևելի հիւսիսային աստեղը մօտ 'ի բեւեռն. *եւտտի երլտըզ, տիւպպի էքպէր, տիւպպի ասղէր*. [բնագրային վկայություններ]: ԱՐՁՈՒ ԽԱՂՈՂ ըստ Բժշկարանի Ազգ վայրի խաղողոյ, կամ շանխաղողոյ. *ընայըլտիւպ, չիւկ*.

ԳՈՄԷՇ, *գոմշոյ, ոց*. և *գոմիշոյ, միշաց* կմ *մշաց*. գ. որ և յն. բառիւ Բորոդոն աւի. Βούβαλος, Ալջ. Bubalus, la; bos vel vacca sylvestris. Ազգ արջառոյ՝ յաղթանդամ, ջրատր, հասարակօրէն սևասուև, և գալարածոյ եղջերքք. *սու սրղըրը կամ էօրիզիւ, ճամուշ, ճավմուշ, կեանուշ, կեակմիշ, մանկա*. [բնագրային վկայություններ]:

ԸՆՉՈՒՄՏ, կամ ԸՆԾՈՒՄՏ, *ըշտու, ուց*. գ. Ի բառիցս Ինձ կամ ինձ, և Ուղտ. (որպէս և 'ի յն. աւի, *գամիւօրա՛րպալիս*, իբր Ուղտինձ). Καμηλοπάρδαλις. Camelopardalis, lus. որ և ԱՆԱԼՈՒԹ, ՉԱՆԱԼՈՒԹ. Չորքոսանի նման ուղտու ըստ ձևոյն բարձրութենէ, և երկայնավոթեան, և ընծու ըստ խաչտարդէտութենէ. *սիրնափա, գիրնափա, գիրափէթ*. [բնագրային վկայություններ]:

Սակայն պետք է նշել, որ կենդանիներին բնորոշելիս հեղինակները ոչ սակավ գործածում են այնպիսի բնութագրումներ, որոնք գիտական կամ գործնական որևէ արժեք չունեն: Մարդիկ իրենց շրջապատող կենդանիներին երբեմն վերագրում են հենց իրենց՝ մարդկանց բնորոշ հատկանիշներ: Այսօրվա բառարաններում այդ հատկանիշները ներկայացված են իբրև այդ բառերի փոխաբերական (ածականական) իմաստներ կամ ուղղա՝յի չկան, իսկ ՆՀԲ-ում շատ կենդանուններ ունեն այդպիսի «հուզական» բնութագրումներ: Այսպես, Աղանի ... Հաւ թոչուն ընտանի՝ սպիտակ յոյժ, ևս և մոխրագոյն, *գեղեցիկ աչօք, և մաքուր, և անմեղ, և յաճախածին*... (այստեղ և հաջորդ օրինակներում ընդգծումները մերն են - Մ. Ֆ.): Կամ՝ Արծուի ... *Թազաւոր հաւուց թոչնոց*, մեծամարմին, կորակտուց, մեծամագիլ, բարձրաթոնիչ, սրատես, յափշտակիչ...: Պորտ ... *Տգեղ և զազիր* կենդանի փոքրիկ քառտանի, կարկաչօղ, ջրային և ցամաքային...: Կատու... Չորքոտանի տնակեաց՝ որսող մկանց, փափկասէր և *սպերախտ* ...: Սակայն բառարանում նմանատիպ նշանակությունների մի մասը ներկայացված է իբրև փոխաբերական իմաստ, ինչպէս՝ Ծուն... Ընացող այր. ... Ընացեալ կին. մերձեայն առ օտար անկողին՝ հանգոյն անխտիր խառնակութենէ շանց. *փեզկէնկ, գահպէ*. [բնագրային վկայություններ]: Վարազ... 'ի բարդութիւնս դնի և որպէս Մեծ, և պերճ, կամ սաստիկ. *պէոյիւք, հափուգ*.

ՆՀԲ-ի հեղինակները հայերեն բառերի գիտական ստուգաբանությամբ գրադրող առաջին գիտնականներն էին: «Հայկազյանի հեղինակները կարողա-

ցան ստուգաբանել պարսկերենից, հունարենից, լատիներենից, եբրայերենից և այլ լեզուներից փոխառված բազմաթիվ բառեր, իսկ որ ավելի կարևոր է, ճիշտ կերպով հայերենի մի շարք «բնիկ» բառեր համեմատել հունարեն, լատիներեն, պարսկերեն, սանսկրիտ և սլավոնական համապատասխանների հետ»⁴: Կենդանանունների մեկնության ժամանակ հեղինակները հաճախ փորձել են նաև ստուգաբանել դրանք: Ընդ որում՝ ոչ փոխառյալ կամ այդպիսին կարծվող բառերի մեծ մասի ստուգաբանությունները կրում են այսպես կոչված «ժողովրդական» բնույթ, ավելի շուտ «ժողովրդական ստուգաբանություններ» են: Օրինակ՝ *Աղուտ* ստուգաբանված է . «յն. ևս *այօրէքս* լտ. *վժւլքէ*. եբր. *դուէր*», *Օխտ* «Ճնճողուկ, որոյ ձայնն լսի իբր ծիտ ջըրդ», *Կլու* «...զի ստեպ ձայնն կո՛ւ կո՛ւ. կամ գո՛ւ գո՛ւ գո՛ւ, այլ եթէ ոք տացէ զայս ձայն, ինքն փոխէ զձայնն, և ասէ, բի՛ բի՛ բի՛, կամ պի՛ պի՛ պի՛. ուստի կոչի թուրքերէն նաև *խպխպիկ*»: Բայց նաև՝ *Առիծ* «Թագաւոր համարեալ գազանաց՝ գազան ահեղ տեսեամբ, ուժով բազկաց, և գոչմամբ ձայնի, մոնջօղ, մեծասիրտ, սեգ. ուստի ՚ի մեզ առիծն է *արի և ոյժ* կամ *յոյժ*. ըստ Վարդանայ և ըստ Տօնականի «Առիծն ՚ի յԱնույոյ». որպէս թէ առիչ»: *Մուկն* «...որպէս թէ միուկ, կամ մսուկ»: *Նապաստակ* «իբր Նա որ ապաստան լինի ՚ի վեմս»: *Ոչխար* «որպէս ոչ խարեալ մալեալ. կամ որոճօղ գխար՝ զբուտ» և այլն: Հեղինակները երբեմն փորձել են ճշտել մինչ իրենց եղած ստուգաբանությունները, ինչպէս՝ *Ճագար* «...Վասն մերձաւորութեան ձայնին կարծի յոմանց, թէ ճագար կոչիցի նաև *չագալ* բազմահաջ կենդանին, նման իւիք իրօք աղուիսու, գալյոյ և շան: Իսկ ՚ի բառս Գաղիանոսի դնի նաև որպէս Բորենի»: Կան նաև փոխառյալ անվանումների ստուգաբանություններ հենց փոխառու լեզվի համար, ինչը, բնականաբար, հայերենի համար որևէ նշանակություն չի կարող ունենալ և բառի բացատրությանը ոչինչ չի հավելում, օրինակ՝ *Կոկորդիլոս*, *Կոկորդիլոս* «...Յոյնք ստուգաբանեն, խորշօղ ՚ի քրքմանէ. զի չախորժէ ասեն - զհոտ նորա»:

Կենդանանունների բացատրության մեջ նկատելի է մի թերություն ևս: Որոշ բառեր բացատրված են փոխադարձ հղումներով կամ փոխադարձաբար միմյանց հետ համեմատելով, ինչը ընթերցողին դնում է դժվարին կացության մեջ: Եթե նա այդ կենդանիներից մեկին չի ճանաչում, չի տեսել, չի կարող պատկերացում կազմել մյուսի մասին: Այսպես, *Արագիլ* բառահոդվածում կարդում ենք. «Թռչուն նման կոնկան կամ խորդոյ՝ երկայն պարանոցա...», *Կոունկ*-ի համար ասված է. «Թռչուն կոկոսացօղ՝ երկայնավիզ որպէս զարագիլ...»: Կամ *Բաղ* «...իբր փոքրիկն սագի...», իսկ *Սագ* «...որպէս բաղ մեծ...»:

Ինչևէ, այս բոլոր թերություններն արդյունք են ժամանակի չիտության, մասնավորապես բառարանագիտության անմշակության և իհարկե չեն կարող ստվերել այն դերը, որն ունեցել է Նոր հայկազյան բառարանը հայ լեզվաբանության, բառարանագրության, նաև դպրոցի և առհասարակ մշակույթի մեջ:

Գրաբարի մյուս հանրահայտ և լիակատար բառարանը, որ ՆՀԲ-ի համառոտաժ տարբերակն է, «Առձեռն բառարան հայկազեան լեզուի»՝ աշխատությունն է: Այս բառարանի հեղինակը՝ Մ. Ավգերյանը, ելնելով իր բառարանի կազմության սկզբունքներից, հնարավորինս կրճատել է քերականական նշումները, ընդհանրապես հրաժարվել է բնագրային օրինակներից, նաև վերանայել և համառոտել է ՆՀԲ-ի բառաբացատրությունները: Կենդանանունների դեպքում հեղինակը գրեթե

⁴ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հտ. առաջին, Եր., 1979, «Երկու խոսք» նախաբանում:

⁵ «Առձեռն բառարան հայկազեան լեզուի», Վենետիկ, 1846: Երկրորդ լրացված հրատարակությունը՝ Գ. Ճելալյանի աշխատասիրությամբ, Վենետիկ, 1865: Մեր ձեռքի տակ է այս երկրորդ հրատարակության՝ 1988 թ. Անթիլիասում կատարված արտատպությունը:

չի բերում հայերեն (արևմտահայ աշխարհաբարով) բացատրություններ, այլ տալիս է միայն դրանց թուրքերեն համարժեքները: Այս հատվածով Առձեռն բառարանը փաստորեն հայերեն-թուրքերեն բառարան է:

Ժամանակակից հայոց լեզվի առաջին խոշոր բառարանը Ստեփան Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանն»⁶ է: Այն, ինչպես հայտնի է, բաղկացած է չորս հատորից և լույս է տեսել Երևանում 1944-45 թթ. (պարունակում է մոտ 120 000 բառ և դարձվածքային միավոր): Բառարանում պահպանված է հին կամ ավանդական ուղղագրությունը: Սա իր սկզբունքներով իսկապես գիտական բառարան է, որի կազմության ընթացքում հաշվի են առնված իր ժամանակի բառարանագիտության վերջին նվաճումները:

Բառարանում գլխաբառի մոտ արված են քերականական նշումներ (ընդ որում, գոյականների մոտ տրված են նաև նրանց գրաբարյան հղովումներն ու հոլովածների մի մասը), ապա՝ ոճական նշումներ, եթե կան, և բերված է բառի բացատրությունը՝ իր օրինակներով: Բառերը բացատրելիս հեղինակն առաջնորդվել է պատմական սկզբունքով, այն է՝ սկզբում բերված են բառերի հնագույն նշանակությունները, ապա՝ ավելի նորերը, որով հստակ երևում են բառիմաստի զարգացման պատկերը, իմաստափոխության բարդ գործընթացները: Ստ. Մալխասյանցը իր բառարանի կազմության հիմքում դրել է Նոր հայկազյան բառարանը, որը լրացրել է հետագայում լույս տեսած մի քանի տասնյակ մասնագիտական և փոքր բացատրական բառարաններից քաղած նյութով, գեղարվեստական գրականությունից, բանահյուսությունից, մամուլից հավաքած բազմահազար նոր բառերով: Մեզ հետաքրքրող անվանումների ցանկը և բացատրությունները Ստ. Մալխասյանցը լրացրել է ճշտել է հիմնականում Գ. Մենևիշյանի «Պատկերազարդ բնական պատմություն» եռահատոր գրքից:

Ստ. Մալխասյանցը հայ բառարանագրության մեջ առաջին անգամ կենդանիների անվանումների բացատրության ժամանակ տվել է նաև դրանց կարգաբանական բնութագիրը: Այս բառերը պարտադիր ունեն *Կենդ.* (երբեմն *Կենդան.*) նշումը, որը բերվում է բացատրությունից անմիջապես առաջ: Բացատրության սկզբում գրեթե միշտ նշվում է, թե տվյալ կենդանին որ ցեղին է պատկանում (հազվադեպ՝ նաև կարգին), ապա հետևում է արտաքին նկարագրությունը, տարածման շրջանը, սնունդը և սնման ձևը (այստեղ հեղինակը հետևում է ՆՀԲ-ին): Ամենավերջում փակագծերի մեջ լատիներենով տրված է տվյալ կենդանու գիտական անվանումը: Սա այս բառարանի գլխավոր նորությունն է (փակագծում նշենք, որ բուսանունների համար նույնպես առաջին անգամ տրված է կարգաբանությունը և լատիներեն անվանումը): Կարգաբանությունը և մանավանդ լատինական անվանումը առաջին հայացքից թվում է ավելորդ և ոչ մասնագետին ոչինչ չասող: Սակայն սա իրական անհրաժեշտություն է և սովորական ընթերցողին կարող է հուշել, թե մասնագիտական գրականության մեջ (տերմինաբանական և կարգաբանական բառարաններ, դասագրքեր, հանրագիտարաններ և այլն) ինչպես առավել հեշտությամբ գտնի ավելի մանրամասն տեղեկություններ իրեն հետաքրքրող բառի և դրանով անվանվող կենդանու մասին: Ուղղակի լատինական անվանումը պետք է զուգակցվի կենդանու անվան կարգաբանությանը, ինչն այս բառարանում չի արված:

Ստ. Մալխասյանցը իր բառարանում մի նորամուծություն էլ է արել: Նա բառերի լուսաբանման ժամանակ գրեթե հրաժարվել է բնագրային օրինակներից, եթե դրանք բառիմաստի կամ իմաստային նրբերանգի բացահայտմանը չեն

⁶ Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հտ. 1-4, 1944-45: Այսուհետև՝ ՀԲԲ:

ծառայում (ընդհանրապես բոլոր բառերի դեպքում և ոչ թե միայն կենդանա-
նունների համար): Հեղինակը բերել է սեփական օրինակներ, որոնք ոչ միայն ճշ-
տում են բառի նշանակությունը, այլև բացատրությանն ավելացնում են մի նոր
տեղեկություն, լրացուցիչ ինֆորմացիա են տալիս կենդանու մասին (որը մեծ մա-
սամբ ընդհանուր իմացական է, երբեմն էլ՝ հետաքրքրաշարժ): Ստ. Մալխասյան-
ցի բառարանում նշված են նաև բոլոր կենդանանունների փոխաբերական ի-
մաստները՝ համապատասխան նշումով և հեղինակի օրինակներով: Բառահող-
վածի վերջում, եթե կան, բերվում են տվյալ գլխաբառով կազմվող դարձվածքնե-
րը և կայուն կապակցությունները՝ բացատրությամբ և օրինակներով:

Ասվածն ավելի ակնառու դարձնելու համար բերենք մի քանի բառահողված
ՀԲԲ-ից: ԱՅԾ, ի (ից), գ. 1. (Կենդ.) Կաթնասուն՝ որոճող կենդանի, երկկնդակաճի-
ների ցեղից, սնամեջ եղջիրներով, կզակից կախ մօրուքով, դիրաշարժ և ճարպիկ.
(*Capra*): Ընտանի այծ: Վայրի այծ: Անկիրիայի այծերը ունին երկար՝ նուրբ՝ փա-
փուկ՝ փայլուն՝ մետաքսանման ու գանգուր մազ: 2. Սովորաբար նոյն կենդանու
չափահաս էգը. (արուն կոչվում է քաղ): Այծերը կթել: Այծը ծնում է սովորաբար 1-2,
երբեմն 3-4 ձագ (ուլ): Այծի միսը այնպես յարգի չէ, ինչպես ոչխարինը: +3. (յոզն.
ձևով, Այծեր, +Իծան, +Ածեր)*, փոխ. Բարկութիւն, խենթութիւն, գժութիւն: Նա լաւ
մարդ է, բայց այծեր ունի (կն իծան ունի), աշխատիր վատ թուպէին չպատահիս
[ապա հետևում են դարձվածքները]:

ԱՐՁ (ոյ կն ու), գ. 1. (Կենդ.) Կաթնասուն գիշակեր գազան՝ արջանմանների
ընտանիքից, քանձրամարմին, մեծազուլիս, հնգամատ ոտներով, սուր եղունգնե-
րով, որ կերակրվում է մսով, բայց նաև պտուղներով, մեղրով ևն (*Ursus*): Հիւսիսա-
յին կամ բևեռային արջերը ձմեռն սպիտակ են լինում: Գորշագոյն արջ: Արջի թո-
ժիւն կամ քոթոթ: Արջերը ձմեռը բայոց են մտնում, քիսփութեան ու հնքարկվում:
Արջերը շատ ուժեղ են, դիրաւ ընտելանում են: 2. Փոխ. Անտառ, անճոռնի, ան-
շնորհք մարդ: Տօ՛, ի՛նչ արջն ես: Էդ արջին ինչո՞ւ ես այստեղ բերել: Այնքան կե-
րել է, որ արջ է կտրել: 3. Փոխ. Հնումն վերադիր անուն Ռուսաստանի. Նրանք դեռ
Հիւսիսային արջի թաթուկների ոյծը չեն փորձել: 4. Ձիթիանքի գերանի ծայրին
դրված ծանր կոճը, մէջտեղը ծակած, որտեղ անց է կացնվում պողոսակը: 5. (Աստ-
ղար.) Մեծ Արջ կն Մ ա յ Լ, Փ ո ք ր Արջ կն Մ ա յ Լ ա կ, Երկու համաստեղու-
թիւն հիւսիսային երկնակամարում, իրաբանչիւրը բաղկացած եօթն աստղից:
Փոքր Արջի ծայրագոյն աստղը կոչվում է Բևեռային աստղ [դարձվածքներ]:

ԳԱՅԼ (ոյ կն ու), ի, գ. (Կենդ.) 1. Գիշատիչ գազան անների ընտանիքից, խոշոր
շան մեծութեամբ, որ ապրում է Եւրոպայում, Հիւսիսային Ամերիկայում և Հիւսի-
սային Ասիայում, շատ վնասակար է անասնապահութեան համար (*Canis lupus*):
Գայլերը ամեն տարի հազարաւոր գլուխ տաւար են ոչնչացնում: Գայլերը ոչըն-
չացված են Անգլիայում և Գերմանիայի ու Ֆրանսիայի հարթավայրերում: Գայլի
մորթը գործ է ածվում մուշտակի համար: Գայլերն ոռնում են շների պէս: Գայլերը
ձմեռները շրջում են փոսակներով: Զաղցած գայլը նոյն-իսկ մարդու վրայ է յար-
ձակվում: 2. Փոխ. Գազանաբարոյ, անկուշտ, յափշտակող մարդ: Նրանք հովի-
ներ չեն, այլ գայլեր են, որ գիշատում են իրանց հօտը: Գայլի պէս վրայ թափվե-
ցին ու խժռեցին: 3. Տ. Գայլխոտ [դարձվածքներ]:

Սակայն հեղինակը ոչ հազվադեպ գործածել է բացատրության հանրագիտա-
բանային եղանակը, այսինքն՝ բացատրել է ոչ թե տվյալ բառը, այլ ամենաբազմա-
պիսի տեղեկություններ է տվել այդ բառով անվանվող կենդանու մասին, ինչով
խիստ ծանրաբեռնել է բառահողվածը, չարդարացված ձևով ընդլայնել է նրա

* + ը նշանակում է գավառական բառ կամ նշանակություն:

ծավալը: Բանասիրական բառարանի համար այս տեղեկությունները անհրաժեշտություն չեն: Ահա այդպիսի մի քանի նմուշ: **Շիկամուկ**... Մկների ցեղին պատկանող մեծ մուկ լերկ խարտեաշ մորթով, կարճ պոչով, որ 1727 թուին մեծ բազմութեամբ Վոլգա գետից անցնելով ողողեց Եւրոպան և նաւերի միջոցով բոլոր աշխարհը...: **Չղջիկան, Չղջիկներ**... Կաթնասուն կենդանիների դասին պատկանող կենդանիների կարգ, տարօրինակ կազմուածքով, առաջին վերջատրութիւնների մատները շատ երկայն, որոնք բարակ մաշկով իրար հետ միացած են, և որոնք բանալով կենդանին թռչունի պէս թռչում է արագ և զգալի կերպով մեծ է երևում, այն-ինչ մարմինը և յետևի վերջատրութիւնները փոքր են. ընդհանրապէս գիշերային կենդանիներ են, ձմեռները անց են կացնում քնափութեան մէջ [այնուհետև նշված են չղջիկների տարբեր տեսակները՝ իրենց բնութագրումներով]: **Օրանգ-ուտան** (մալայերէն *eranoutan* անտառի մարդ, ընդհանրացած բառ)... Նրբաքիթ կապիկների ցեղին (*Catarrhinida*) պատկանող կապիկ, ամենամանր մարդուն կապիկների մէջ. տափակ քթով, կլոր ու մերկ ականջներով, թանձր ու հաստ շրթունքներով, առջևի ձեռները շատ երկայն, որոնց վրայ յենվում է քայլելու ժամանակ. դեմքն ու ձեռները լերկ, մատներն առանձին-առանձին շարժել չի կարող. ունի տափակ եղունգներ, պոչ չունի: Ապրում է Բորնէո կղզում, ծառախիտ անտառներում, ցախերից շինած բոյնի մէջ. կերակրվում է պտուղներով, տերևներով, բարակ ճիւղերով և թռչունների ձուերով: Խաղաղասէր է, գետնի վրայ դանդաղաշարժ, ծառերի վրայ ճարպիկ և արագաշարժ (*Pithecus satyrus*):

Ստ. Մալխասյանցը, իր բառարանում ընդունված կարգով, բազմաթիվ կենդանաճանաչումներ ստուգաբանել է (մեծ մասամբ փոխառյալները): Ստուգաբանությունները տրվում են քերականական նշումներից անմիջապէս հետո՝ փակագծերի մէջ: Հեղինակը կարևոր է համարել «նշանակել ոչ միայն այդ բառերի գրութեան ձևերը փոխառու [վրիպակ է. պետք է ինի *փոխառու* - Մ. Ֆ.] լեզուներում, այլև այն ուղիւն, որով նրանք մտել են հայերէնի մէջ»⁷, այսինքն՝ միջնորդավորված փոխառությունների դեպքում նշված է նաև միջնորդ լեզվում տվյալ բառի հնչյունը (փոխառու լեզուների բառերը բերված են գիտականորեն ընդունված լատիներեն գրադարձությամբ), ինչպէս՝ *Գոմէշ* «պահլ.-պարսկ. *gāvmēš*, փարսի *gōmīš*, գենդ. *gao-maesā*, կով-խոյ», *Խլորդ* «ասոր. *xulda*, արաբ. *xulud*», *Ջէրան* «թաթար. *geyrān*, տաճկ.-ից կմ պարս.-ից», *Սկիւռ* «յուն. *skiouros*, պոչով շուռք անող, սկիւռ» և այլն: Այստեղ նշենք, որ բացատրական բառարանում բառերի ստուգաբանությունը կամ ծագումը նշելու անհրաժեշտություն չկա, և դրանց ներկայությունը բառի մեկնությանը փաստորեն ոչինչ չի ավելացնում:

Կենդանիների անունները շատ հոմանիշներ չունեն (մանավանդ, եթե հիշենք, որ դրանց մեծ մասն ունի տերմինային արժեք, կենսաբանական տերմին է): Այդ իսկ պատճառով էլ բացատրության հոմանշային եղանակը բառարանում քիչ է կիրառված: Իբրև հոմանիշներ շատ հաճախ բերված են այդ բառերի բարբառային կամ խոսակցական հնչյունական տարբերակները, երբեմն էլ խոսակցականում տարածված օտարբանությունները (*Խլորդ*-գետնամուկ, խլմուկ, կոյր մուկ (քռո մուկ), *Նապաստակ*-ալապստրակ, լապստրակ, *Կատուառիւծ*-կուգուար, պումա, *Շիկամուկ*-կոխա, *Շնագայլ*-չախալ, չախկալ և այլն): Հոմանիշները տրված են բուն բացատրությունից հետո և նրանից անջատված են միջակետով: Եթե կենդանու

* Տե՛ս նաև *Կապիկ, Մրջնաքաղ, Յովագ, Նապաստրակ, Շիկանգէ, Ոզնի* և այլ բառաբանումներ:

⁷ Մտ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հտ. առաջին, Երևան, 1944, էջ ԺԳ:

(հատկապես ընտանի կենդանիների) արուն և էգն ունեն տարբերակված անվանումներ, բառարանում անպայման նշված են (ձագերի անվանումները ոչ միշտ են բերված):

Ավելացնենք նաև, որ Ստ. Մալխասյանցին ոչ միշտ է հաջողվել խուսափել ՆՀԲ-ում նկատվող այսպես կոչված «հուզական» մեկնաբանություններից. *առյուծն* անվանվում է *վեհանձն*, *բորենին շատ տգեղ*, *ծովախոճկորը՝ զվարթ*, իսկ *համրուկը (յամրուկ)՝ տխուր*, *կապիկը չարածճի* է և *հտպիտ*, *ոնգեղջյուրը՝ ծուլլ ու խաղաղասեր* և այլն: Այս բնութագրումները, ինքնըստինքյան հասկանալի է, գիտական կամ ճանաչողական արժեք չունեն:

Ստ. Մալխասյանցի բառարանին երկար ընդմիջումից հետո հաջորդեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի լեզվի ինստիտուտի կազմած «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը»: Այն ընդգրկում է ժամանակակից արևելահայերենի (մասամբ էլ արևմտահայերենի) ավելի քան հարյուր հազար բառ և դարձվածքային միավոր: Բառացանկի հիմքը Ստ. Մալխասյանցի բառարանն է, որից դուրս են թողնված գրաբարյան բառերը, հնաբանությունները, բարբառաբանությունները: Այն համալրվել է լեզվի ինստիտուտի կազմած համաբարբառից, գեղարվեստական գրականությունից, մամուլից, այլ միալեզվյան և քարգմանական բառարաններից քաղված փաստական հարուստ նյութով: Այս բառարանը, ի տարբերություն նախորդի, նորմատիվ բնույթի է:

Կենդանիների անվանումների բացատրության առումով (ինչպես և ընդհանրապես բառերի բացատրություններում) այս բառարանը բերում է որոշակի նորություններ: Գլխաբառի քերականական բնութագրումից և *կենդր*. նշումից հետո տրվում է բուն մեկնությունը: Ակադեմիական բառարանի հեղինակներին հաջողվել է ճշգրտել բազմաթիվ բառերի իմաստները: Նրանք ավելի հստակ են տարբերակել բառերի նշանակությունները (առանձնացված են արաբական թվանշաններով), հատկապես ճշտված և լրացված են փոխաբերական իմաստները: Ընդլայնված է տվյալ գլխաբառով կազմված դարձվածքների և կայուն կապակցությունների շարքը:

ԺՀԼԲԲ-ում նույնպես հաճախ է կիրառված կենդանանունների բացատրությունը կարգաբանության միջոցով: Մեր կարծիքով, սա բացատրության առավել ընդունելի և գիտական եղանակն է, որը, ցավոք, այս բառարանում համակարգային ու հետևողական բնույթ չի կրում: Այն տպավորությունն է ստեղծվում, թե կարգաբանությունը տրված է միայն այն անվանումների համար, որոնք ծանոթ են հեղինակներին, կամ որոնց կարգաբանությունը հնարավոր է եղել գտնել: Ընդ որում, չի պահպանված միօրինակությունը. անվանումների մի մասի համար նշված է կարգը, մյուսների՝ կարգը և ցեղը, երրորդների դեպքում՝ միայն ընտանիքը և այլն: Բացատրության վերջում հազվադեպ, հիմնականում չորրորդ հատրում, տրված է նաև կենդանու գիտական պաշտոնական լատիներեն անվանումը (լատինատառ, փակագծերում): Իսկ ընդհանուր առմամբ պահպանված է նախորդ բառարաններում ընդունված բացատրության եղանակը. տրված են ընդհանուր տեղեկություններ կենդանու գույնի, չափի, տարածման շրջանի և այլնի մասին: Բերենք ասվածը հաստատող մի քանի բառահոդված: **ԱԳՈՒՎ**, ի, գ. 1. Գորշ-սևագույն գիշակեր թռչուն: *Յին ու ագռավ իջան ամպից, Սև աչքերը հանեցին (ՀԹ)*: 2. Խաղաթղթի տեգաձև սև տեսակը: *Ագռավի տասանոցը*: 3. *փխբ*. Զարագուշակ մարդ [դարձվածքներ]:

¹ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հտ. 1-4, եր., 1969-1980: Այստեղևս: Ակադեմիական բառարան կամ ԺՀԼԲԲ:

ԱՂՎԵՍ, ի, 1. *գ.* Շների կարգին պատկանող սուր դնչով, երկար թավամազ պոչով, վայրի գիշատիչ գազան: *Մին էլ տեսնեն մի քանի քայլ հեռու մի թուխ թավամազ աղվես, մի չամի ծառի տակ մտած՝ քիթը վեր է քաշել ու օդի մեջ հոտոտում է (ՀԹ):* 2. *գ.* (խսկց.) Աղվեսի մորթի, աղվեսենի: *Աղջի ջան, վախենաս ոչ, շունը վզիդ աղվեսի վրա է չարացել (ՄԽ):* 3. *ա., գ., փխբ.* Խորամանկ՝ շողոքոթ՝ ճարպիկ՝ հմարագետ (մարդ): *Դառնացավ ծերուկը: Բազում խճճված ցանցերից, խարդախ թակարդներից ճարպկորեն դուրս պրծած աղվեսը գլուխը կախեց (ԴԴ):* 4. *գ.* (բրբ.) Փայտ, որն օգտագործվում է սայլի մի մասը մյուսին կապելու համար [դարձվածքներ]:

ԳԵՏԱԿԻՆՆ, ի, *գ.* Գետերում ապրող կարճ կնճիթավոր կաթնասուն սմբակավոր կենդանի: *Այստեղ [կարելի է] տեսնել... գետակինճ... և շատ այլ կենդանիներ, որոնք հազվագյուտ և խիստ արժեքավոր են (Մամուլ):*

ԳՈՐՇՈՒԿ, ի, *գ.* Կզաքիսների ցեղին պատկանող գիշատիչ գազան, իշղար, փորսուղ:

ՇԻՄՈՒՄԵՆ, ի, *գ.* (կենդր.) Աֆրիկայի անտառներում ապրող մարդանման կապիկ:

Այս բառարանում թեև բացատրությունները հիմնականում հաջողված են և ընթերցողին որոշակի գաղափար են տալիս ներկայացվող կենդանու մասին, սակայն հեղինակները երբեմն վրիպել են կենդանու ամենաբնորոշ հատկանիշը, ասենք, *պինգվին* և *ջայլամ* բառերի մոտ նշված է *թռչում*, սակայն չի ասված, որ սրանք չթռչող թռչուններ են: Որոշ դեպքերում էլ հեղինակները բաղադրյալ գլխաբառը բացատրել են ըստ դրա բաղադրիչների, որը ընթերցողներին ընդամենը հուշում է, որ խոսքն ինչ-որ հատկանիշ ունեցող կենդանու մասին է: Օրինակ՝ *Արջնագռավ* - «սև ագռավ», *Բենուղվես* - «բենուային աղվես, բացկապտագույն աղվես», *Գիշանգղ* - «գիշակեր անգղ», *Դաշտաղվես* - «դաշտային՝ տափաստանային աղվես», *Սուզահավ* - «ջրում սուզվող թռչուն» և այլն:

Հեղինակներն, ըստ իրենց որդեգրած սկզբունքի, յուրաքանչյուր բառի և բառի ամեն մի նշանակության համար բերում են բնագրային օրինակներ, որոնք, ինչպես իրենք են նշում առաջաբանում, «պարզում են նրանց գործածության ոլորտը, տալիս են բառի ռճաբանական բնութագիրը և նպաստում բառի իմաստի ավելի լավ ու լրիվ ըմբռնմանը»: Շատ դեպքերում դա իհարկե այդպես է: Սակայն կենդանաբանների լուսաբանման համար երբեմն բերված են այնպիսի օրինակներ, որոնք, թվում է, միայն բառի գործածությունը հաստատելու համար են և ոչինչ չեն հավելում բացատրությանը: Մա մանավանդ այն դեպքում, երբ օրինակները գեղարվեստական գրականությունից են: Այսպես, *Շուն* բառի առաջին, հիմնական իմաստի շարադրումից հետո («1. Շնագզիների ցեղին պատկանող ընտանի շողոքոտանի կենդանի, որ հայտնի է տիրոջ նկատմամբ հավատարմությամբ») բերված է Հովի. Թումանյանի հանրահայտ տողը՝ «Ժամանակով կատուն ճոն էր, Շունն էլ գլխին գդակ չուներ», որը բացատրությունը որևէ ձևով չի լրացնում, չի կոնկրետացնում. ընդհակառակը, ավելի խճճում է (այդ ի՞նչ կենդանի է, որ գդակ պիտի ունենա և չունի): Կամ էլ *Ուղտ* բառի բուն նշանակության լուսաբանման համար այս անգամ օրինակ է բերված Ավ. Խսահակյանի պոեմից մի նախադասություն՝ «Եվ ուղտերն, իբրև ոսկի մակույկներ, հուր ալիքները ծով անապատում ճեղքելով արագ՝ սլանում են դեպի բոցավառ, լուսավառ հեռուն»: Հեղինակներն իրենք էլ, զգալով այս օրինակի անհապատասխան լինելը, անմիջապես բերում են երկրորդը, որը, հանրաճանաչությամբ չգիջելով առաջինին, մույնպես ոչինչ չի

ավելացնում բառի բացատրությանը. «Ամպերը դանդաղ ուղտերի նման նոր են ջուր խմած ձորից բարձրանում» (Հ. Թումանյան): *Չղջիկ* բառի հիմնական իմաստը ճշտելու համար հեղինակները կրկին դիմել են Հովհ. Թումանյանին և կրկին անհաջող. «Մի օր չղջիկն ու ճայն եկան, թե՛ եկ դառնանք վաճառական»։ Ըստ մեզ, այս պարագայում ճիշտ չէ ցուցադրական նյութ ընտրել այնպիսի ստեղծագործություններից, մանավանդ չափածո, որոնք գրված են սիմվոլիստական ոգով կամ ունեն ալլաբանական-ալլասացական իմաստ: Բայց թող այն տպավորությունը չստեղծվի, թե օրինակները միայն անհաջող են: Հեղինակները իրավացիորեն բազմաթիվ մեջբերումներ են արել կենդանաբանության դասագրքերից, հանրամատչելի գրականությունից, մի բան, որն ամենաճիշտն է տվյալ դեպքում: Իհարկե կան նաև գեղարվեստական գրականությունից բերված բազում դիպուկ օրինակներ: Այդպիսին են *Սամույր* բառի բոլոր չորս իմաստների համար բերված օրինակները (Բաֆֆուց և Ստ. Ջորյանից)*:

Ժամանակակից հայոց լեզվի առայժմ վերջին ծավալում բառարանը Էդվարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»¹⁰ է: Այն ամենաձավալունն է մինչ օրս լույս տեսած բացատրական բառարաններից (պարունակում է 135 600 բառ և 11 000 դարձվածաբանական միավոր) և հնարավորինս լրիվ է արտահայտում անցյալ դարի երկրորդ կեսի գրական հայերենի բառապաշարը: «Գիտական բարձր մակարդակով և մասնագիտական հմտությամբ են կատարված բառահոդվածի կազմումը, համանունների առանձնացումը, գլխաբառին տրվող քերականական և ոճական այլևայլ նշումները, բառիմաստների տարբերակումն ու դասակարգումը, տարբերակված իմաստների բացատրությունը կամ մեկնաբանությունը, զանազան սահմանումները, այդ իմաստները հաստատող բնագրային որոշ օրինակների տեղադրումը: Նշված փաստերի մշակվածությամբ այն դրականորեն տարբերվում է նախորդ բոլոր բառարաններից»¹¹:

Կենդանանունները բացատրելիս Էդ. Աղայանը դիմում է ամենից գիտական և ճշգրիտ միջոցին: Նա, որպես օրենք, այդ բառերի հիմնական, առաջին նշանակություններին տալիս է կարգաբանական նկարագրություն, ապա, ըստ անհրաժեշտության, ավելացնում է այլևայլ լրացուցիչ տեղեկություններ: Սրան հետևում են բառերի փոխաբերական իմաստի կամ իմաստների բացատրությունները, իսկ վերջում՝ դարձվածաբանությունը:

Իր աշխատության բառացանկի բառագիտական-լեզվաբանական մշակման ժամանակ հեղինակը մի շարք դեպքերում չի կատարում հատուկ նշում, որը ցույց կտար, որ տվյալ բառը պատկանում է այս կամ այն գիտական բնագավառին: Նա դա պատճառաբանում է այսպես. «Լեզուների, բույսերի և կենդանիների անվանումների մոտ լեզվաբ., բուս., կենդ. նշումներ չեն դրվել, որովհետև դրանք, իսկն ասած, տերմիններ էլ չեն, թեև գործածվում են այդ գիտություններում, այլ լեզվի չեզոք շերտի բառեր, որոնք (օր.՝ հայերեն, ծիրանի, առյուծ են) պատմականորեն էլ ավելի վաղ են գոյություն ունեցել լեզվի մեջ, քան այդ գիտությունների ձևավորումը: Միայն բուսանուններից մի քանիսն ստացել են բուս. նշումը այն պատճառով, որ նրանք գործածվում են միայն մասնագիտական գրականության մեջ (օր.՝ շքածառ, սորգո են)»¹²: Ամմիջապես ավելացնենք, որ կենդանանունների մի մասը

* Տե՛ս նաև *Այծ, Բվեն, Շնագայլ, Սկյուռ, Վիթ* և այլ բառահոդվածներ:

¹⁰ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երկու գրքով, Եր., 1976:

¹¹ Ա. Մուքիսայան, Բառարանագրություն // «Հայերենագիտությունը 60 տարում», Եր., 1981, էջ 160:

¹² Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, առաջին գիրք, Եր., 1976, Առաջաբան, էջ XV:

վերը նշված վերջին պատճառով նույնպես ունի *կենդր*. նշումը: Սա հատկապես վերաբերում է փոխառություններին, իսկ հայերեն այն տերմինները, որոնք բաղադրյալ բառեր են, և որոնց որևէ բաղադրիչից (սովորաբար վերջինից) երևում է դրանց կենդանանուն լինելը, այդպիսի նշում չունեն (Այծուղտ, Իշալծյամ, Ճագարամուկ, Ճահճակուտը, Գետնասկյուռ և այլն, և այլն): Իսկ եթե բաղադրիչներով չի պատճառաբանվում բառի կենդանանուն լինելը, *կենդր*. նշում սովորաբար կա, ինչպես՝ Ջրահամորթ, Խեցգետին և այլն: Նշումների այս համակարգը բավականին բարդ է և մինչև վերջ հետևողականորեն չի կիրառված բառարանում: Մեզ թվում է, որ ավելի ճիշտ կլիներ բոլոր կենդանանունների մոտ դնել *կենդր*. նշումը, մասնավորապես որ դրանց մեծ մասը հիմնական բառագանձի միավոր չէ, իսկ լեզվի չեզոք բառաշերտին պատկանող այդպիսի բառերը զուգահեռաբար նաև տերմիններ են:

Բերենք նաև այս բառարանից մի քանի բնութագրական բառահոդված:

ԱՆՅՈՒՃ, *ի, գ.* 1. Կատունների ընտանիքին պատկանող կաթնասուն գիշատիչ զագան: 2. *փխբ*. Քաջ՝ սրտոտ՝ հզոր մարդ: 3. (*աստղգ.*): Ջողիակի կենդանակերպներից մեկը՝ յոթերորդը [դարձվածքներ]:

ԱՐՁ, *ի, գ.* 1. Արջազգիների ընտանիքին պատկանող կաթնասուն գիշատիչ զագան: 2. *փխբ*. Անտաշ՝ անճոռնի՝ անշնորհք մարդ [դարձվածքներ]:

ԻՇԱՅՃՅԱՄ, *ի, գ.* Եղջերվազգիների ընտանիքին պատկանող խոշոր որոճող կաթնասուն:

ԽՈՁ, *ի, գ.* 1. Խոշորամարմին, կարճատև, երկար դնչին կոճկանման կլոր քթով կճղակավոր կաթնասուն, որի ընտանին բուծվում է միս, ստև, ճարպ ստանալու համար: 2. *փխբ*. (*խսկց.*): Կեղտոտ՝ փնթի մարդ: 3. (*խսկց.*): Անբարեհամբույր՝ ոչ մարդամոտ՝ ոչ բարեկամասեր մարդ: 4. (*խսկց.*): Երախտամոռ՝ անշնորհակալ մարդ: 5. *փխբ*. Նույն կենդանու միսը [դարձվածքներ]:

ՅԱԿ, *ի, գ.* (*կենդր.*): Կենտրոնական Ասիայի բարձրալեռնային շրջաններում ապրող որոճող եղջերավոր խոշոր կենդանի, որ օգտագործվում է իբրև բեռնակիր, հեծանելի, երբեմն նաև մսատու և կաթնատու կենդանի:

Էդ. Աղայանը, բացի կարգաբանականից, գործածել է նաև հոմանիշներով բացատրության սկզբունքը, իսկ բազմաթիվ նորակազմ հայերեն բառերի բացատրության վերջում փակագծերի մեջ տվել է նաև դրանց օտարալեզու համանշանակները (Դաշտաղվես-կորսակ, Ճահճակուտը-նուտրիա, Շնակապիկ-մանդրիլ, բայց նաև՝ Գետածի-բեգեմոտ, Շնածուկ-ակուլա): Հեղինակին չի հաջողվել լրիվ խուսափել բառերի ըստ բաղադրիչների մեկնությունից, որը, ինչպես նշեցինք, կենդանանունների համար թերի եղանակ է (այս բառերը հիմնականում ժառանգվել են նախորդ բառարաններից): Սակայն Էդ. Աղայանը այդպիսի դեպքերում երբեմն բացահայտել է բառի պատճառաբանված իմաստը, ինչպես՝ *Գետնասկյուռ* «Սկյուռների ընտանիքին պատկանող կրծող, որ ապրում է գետնափոր բնում, սվիլի», *Ջրարջ* «Անտառային փոքրիկ գիշատիչ կենդանի, որ ապրում է ծառափչակներում (ջրարջ անվանումն ստացել է այն պատճառով, որ որսն ուտում է ջրում թաթախելուց հետո), ենոտ»*:

Բաղիմաստի լուսաբանման համար Էդ. Աղայանը բնագրային օրինակներ սկզբունքորեն գրեթե չի բերում, ինչը տվյալ դեպքում լրիվ արդարացված է, այլ երբեմն կազմում է սեփականները:

Ամփոփենք: Կենդանիների անվանումների բառարանագրական մշակումը հնարավոր է կատարել միօրինակ, և բառահոդվածը պետք է ունենա հետևյալ

* Տե՛ս նաև *Ժանդարիս, Մրջնակեր, Ռեզեղյուր* և այլն:

կառուցվածքը: Գլխաբառ, նրան կցված քերականական նշումներ, ապա նշում բառի՝ կենդանաբանական գիտաճյուղին պատկանելու մասին: Սրան պետք է հետևի բառի բուն բացատրությունը, ընդ որում պետք է անհրաժեշտաբար տրվի կենդանու կարգաբանությունը (առնվազն կարգը և ընտանիքը): Լատիներեն անվանումը պարտադիր չէ: Այսօր այս անելը շատ հեշտ է և հասու է բառարանագիրներին, քանի որ հրապարակի վրա է Ռ. Ղազարյանի «Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարանը»¹³: Սա, ինչպես արդեն նշել ենք, ոչ մասնագետ ընթերցողին կարող է կողմնորոշել, հուշել, թե որտեղից գտնի իրեն հետաքրքրող բառով անվանվող կենդանու առավել լիակատար նկարագրությունը*: Ապա պետք է հետևեն բառի փոխաբերական իմաստները և դարձվածքները: Նշանակությունները լուսաբանելու համար պետք է բերվեն այնպիսի բնագրային օրինակներ, որոնք որևէ ձևով ճշտում, լրացնում են բառիմաստը, հատուկ դեպքերում օրինակը պետք է ինքը՝ բառարանագիրը, կազմի (ինչպես վարվել է Ստ. Մալխասյանցը. կարելի է բերել ոչ միայն նախադասություններ, այլև բառակապակցություններ, ինչպես էր. Աղայանը):

М. А. ФЕЛЕКЯН - Толкование слов, обозначающих животных, в словарях армянского языка. - Для лексикографии важна унификация объяснений определенных тематических групп лексики. Этим можно достигнуть однотипности толкований и разграничения значений, последовательности и единообразия стилистических характеристик, подачи фразеологизмов и т.д.

В статье рассмотрены способы определения зоонимов в общих толковых словарях армянского языка. На материале анализа словарей древнеармянского и современного армянского языка автор попытался дать примерную структуру и содержание словарной статьи, где определяются слова, обозначающие животных.

¹³ Ռ. Ղազարյան, Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարան, գիրք Ա-Ե, Եր., 1992-1999:

* Ի դեպ, Ռ. Ղազարյանը իր «Գրաբարի բառարան»-ում (Անթիլիաս-Լիբանան, 2004) հենց այդպես էլ վարվել է. կենդանիների անվանումների մոտ տրված է դրանց կարգաբանությունը (ընտանիքը) և լատիներեն անվանումը (փակագծերում):